ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական որակավորման բարձրացման և միջբուհական համագործակցության կենտրոնի ղեկավար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՐԻԱՄ ՄԵՀՐԱԲՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՀԱՆԴԵՊ ՀԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀՏԴ 159.9:301.19

Թրաֆիքինգը բազմաբնույթ և բազմաֆունկցիոնալ բռնություն է, մարդու կողմից մարդու շահագործում, որում վճռորոշ դեր ու նշանակություն են ձեռք բերում անձնային և սոցիալ–հոգեբանական գործոնները: Թրաֆիքինգը բնորոշվում է հասարակության ֆիզիկական և հոգեկան առողջությունը կազմալուծող գործառույթներով: Երևույթի պատկերը բրգաձև է: Թրաֆիքինգ–գործունեության շղթայում ներգրավման վճռորոշ գործոններն են սոցիալականացման գործընթացում և անձի հոգեկերտվածքում անձնային առանձնահատուկ և սոցիալ–հոգեբանական յուրատիպ զուգորդությունների առկայությունը: Թրաֆիքինգ–գործունեության համատեքստում կիրարկվում են հոգեբանական պաշտպանական տարաբնույթ մեխանիզմներ, որոնցից ամենաբնորոշը հոգեբանական նույնականացումն է՝ «նույնականացում ագրեսորի հետ» ձևաչափով: Թրաֆիքինգ–գործունեությունը մարդու կողմից մարդու շահագործման ամբողջական պատկերն է, որին նախորդում է վիկտիմ վարքին հակվածություն–թրաֆիքինգին հակվածություն պատճառահետևանքային շղթան:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ վիկտիմ վարք, թրաֆիքինգ, շահագործում, զոհականացում, կրկնազոհականացում, դեպրեսիվություն, մեղքի զգացում, թրաֆիքինգի հանդեպ հակվածություն, ագրեսոր, նույնականացում:

20–րդ դարի վերջին ամբողջ աշխարհում հսկայական քանակությամբ մարդիկ հայտնվեցին սոցիալապես և տնտեսապես անպաշտպան ու կյանքի բարձր արագությանն արձագանքելուն անպատրաստ վիճակում: Մինչդեռ հատկապես հրատապ խնդիր է մարդու իրավունքների պաշտպանությունն՝ անկախ սոցիալական պատկանելությունից: Նշված խնդիրները պահանջում են հոգեբանական արհեստավարժ մոտեցում, համապատասխան տեսական և գործ-

նական հիմքերի, ուսուցման ազգային ավանդույթների, աճող սերնդին արժեքների փոխանցման համակարգի մշակում: Նշված խնդիրների թվում առաջնահերթ է ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանությունը, այլև նրանց աշխատանքով ապահովումը:

Ըստ միջազգային վիճակագրական տվյալների [2, էջ 45] թրաֆիքինգը վերջին տարիներին լայնորեն տարածվել է աշխարհի գրեթե բոլոր երկրներում, և ակտիվացել են երևույթի կանխմանը միտված գործողությունները, իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ [1, էջ 78–79], որոնք հնարավորություն են տալիս բացահայտել ընդհանուր պատկերը և մշակել արդյունավետ ռազմավարություններ՝ ուղղված հիմնախնդրի լուծմանը: Այս առումով կարևորվում է թրաֆիքինգի սոցիալ–հոգեբանական պատճառահետևանքային կապերի բացահայտումը և երևույթի բազմահայեցակետային դիտարկումը:

Համաձայն սոցիալական հոգեբան Ն. Հակոբյանի [5,6,7] կողմից առաջ քաշված այն տեսական դրույթի, ըստ որի փոխակերպվող հասարակության մեջ առկա տարբեր իրավիճակների ներգործության հետևանքով մարդկանց բնորոշ են կտրուկ ձևախախտումները, փոփոխությունները, կարող ենք եզրակացնել, որ 90–ական թվականներից ի վեր առկա անձի ոլորտում ձևախեղումներն ունեցել են բավականին բարձր աստիճան, ինչով էլ մեկնաբանվում է նաև թրաֆիքինգի աճի միտումները հենց այդ տարիներից ի վեր: Նոր տնտեսական հարաբերությունների պայմաններում, ինչպես պատկերավոր ներկայացնում է հոգեբան Ն. Հակոբյանը՝ «փոխակերպվող հասարակությունում բազմաթիվ օբյեկտիվ պատճառների ծանրության տակ որոշակիորեն նսեմացել է կրթության, դպրոցի, մանկավարժի և գիտելիքի դերը և առաքելությունը, որը նպաստում է աճող երեխայի պահանջմունքների և հետաքրքրությունների այլափոխումներին, նրա սոցիալական, հասարակական, բարոյական և իրավական գիտակցության խաթարումներին» [8, էջ 26]:

20–րդ դարի վերջին քառորդում մարդկանց առքուվաճառքը դարձել է միջազգային խնդիր: Այն երկրների կառավարությունը և բնակչությունը, ուր մարդկանց տանում են որպես «կենդանի ապրանք», մտահոգություն են հայտնում աճող խնդրի մասշտաբների, անօրինական միգրացիայի վերաբերյալ, որն ուղեկցվում է կազմակերպված հանցավորության ցանցի ընդլայնմամբ:

«Թրաֆիքինգ» երևույթը արդիական խնդիր է նաև Հայաստանի համար: Որպես կանոն, մարդկանց շահագործման զոհեր են դառնում մեր այն հայրենակիցները, ովքեր ցանկանում են ամեն գնով խուսափել ցածր կենսապայմաններից, երբեմն անշրջահայացորեն, այդ նպատակով համաձայնում են լքել մեր հայրենիքը, միամտորեն հավատալով եկամուտներն արագ բարձրացնելու իրենց տրված հաճախ սին խոստումներին: Արդյունքում նրանցից շատերը հայտնվում են ծանր կացության մեջ՝ ֆիզիկապես և բարոյապես անխղճորեն շահագործվում են, ստիպված են լինում կատարել իրենց ուժերից վեր ծանր աշխատանք՝ դրա դիմաց չվճարվելով, արժանապատվության նսեմացմամբ, ենթարկվելով ծեծի ու սպառնալիքների:

Մարդկանց շահագործման դեմ գործուն պայքար մղելու նպատակով 2000թ. հռչակվեց ՄԱԿ–ի Գերագույն հանձնաժողովի Միավորված ազգերի կազմակերպության «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան», որը հետագայում լրաց-

վեց 2003թ. Պալերմոյում ընդունված երկու արձանագրություններով՝ «Ցամաքով, օդով կամ ծովով մարդկանց ապօրինի փոխադրումների դեմ» և «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրություններով [12, էջ 18]: Նշված սահմաններում և կատարված միջազգային վերլուծություններում թերի էր և բաց այն կողմը, որ թրաֆիքինգն ամբողջությամբ լինելով բռնություն, չէր դիտարկվել որպես բռնությամբ ուղեկցվող գործընթաց, որտեղ ներգրավված անձը պարտադիր կերպով աչքի է ընկնում վաղ մանկության տարիներից ձևավորվող թրաֆիքինգի հանդեպ հակվածությամբ:

Գրականության մեջ [14, 15] բռնության հոգեբանական արմատները կայանում են նրանում, որ հանցագործը, շատ դեպքերում էլ չգիտակցված, զոհին վերագրում է իր պահանջմունքները բավարարելու ընդունակություն կամ պահել իրեն համապատասխան իր պատկերացումներին հարմար վարքով, իսկ հետո պահանջում է արդեն իրեն հարմար վարքի տեսակ: Ըստ Ա. Դոլոգովայի ագրեսիվ հանցագործների համար կապը որոշակի մարդկանց հետ ձեռք է բերում կենսակարևոր, ապահովող բնույթ [14, էջ 44]: Բռնության հանդեպ որոշ մարդկանց հակվածությունը ընկնել կախվածության մեջ տարբեր օբյեկտներից առանց յուրահատուկ վերլուծության դժվար է դուրս բերել: Բազմաթիվ հետազոտություններ հանգեցրել են այն բանին, որ այդ հակվածությունը ձևավորվում է մարդու կյանքի վաղ խմբերում, վաղ մանկության շրջանում, և հանդիսանում է այն դիրքի արդյունքը, որ երեխան զբաղեցնում է ընտանիքում, ասենք որպես ապագա հանցագործ [15, էջ 25–28]: Այդ դիրքի էությունը կայանում է ծնողների կողմից չընդունման մեջ և երբեմն նույնիսկ ուղիղ մերժման: Քրեական բռնության հետազոտությունն այդ իմաստով վառ ցուցադրում է իր ծնողների համար երեխայի որպես անգնահատելի արժեք լինելու սխալ տարածված կարծիքը, և հետևաբար, մարդու այդպիսին լինելը: Առավել դրամատիկ այն իրավիճակը, երբ մերժողի դերում է լինում երեխայի մայրը: «Մերժում» տերմինը նշանակում է մոր վերաբերմունքը երեխայի հանդեպ, երբ նա կամ ընունակ չէ, կամ չի ցանկանում, կամ չի կարողանում ժամանակին և հստակ բավարարել նրա պահանջմունքները և, առաջին հերթին, բնականը՝ սննդի, ջերմության, մաքրության և այլն: Արդյունքում այդ երեխան գտնվում է պահանջմունքների մշտական անբավարարության մեջ [15, էջ 39–41]: Հենց այդ պահանջմունքի անբավարարությունն էլ դարձնում է նրան կախված այլ մարդուց, ասենք մորից, քանզի միայն նա կարող է դրանք բավարարել:

Այսպես, շատ կարևոր է թրաֆիքինգի հոգեբանական հիմնավորման մեջ անձի տագնապայնության հաշվի առնելը, որը դրսևորվում է անհանգստությամբ տարբեր իրավիճակներում: Տագնապայնության որոշակի մակարդակ գոյություն ունի ցանկացած մարդու մոտ, սակայն բարձր մակարդակը հանդիսանում է անբարեհարմարության սուբյեկտիվ դրսևորում: Բավականին բարձր է տագնապային անձի կախվածությունը անբարենպաստ միջավայրից, քանի որ նա խստորեն կախված է դրանից [17, էջ 56–59]: Այս առումով, նման մարդը ազատ չէ ընդհանրապես և կոնկրետ իրավիճակներում, քանի որ իրեն չի առանձնացնում շրջակա միջավայրից: Հետևաբար, նրա մոտ ցածր է գիտակցվածության մակարդակը, իր արարքների իմաստավորվածությունը, իրենց սուբյեկտիվ արժևորությունը:

Կատարված վերլուծությունների և նախնական հետազոտությունների [8,9,11] հիման վրա կարելի է տալ թրաֆիքինգի հետևյալ սոցիալ–հոգեբանական սահմանումը.

Թրաֆիքինգը սոցիալ–հոգեբանական եռափուլ շարժընթացով, հորիզոնական և ուղղահայաց բրգաձև ստորակարգությամբ, դերադիրքային, վարքային ասոցիալ դրսևորումներով ուղեկցվող գործընթաց է, որում մասնակցության վճռորոշ գործոններն են՝ անձնային յուրօրինակ հոգեբանական առանձնահատկությունների համախումբն ու վիկտիմոլոգիական տիպաբանությունը:

Թրաֆիքինգի մեջ կարևորագույն շղթա է վիկտիմ վարք–թրաֆիքինգի հանդեպ հակվածություն տրանսֆորմացիան, այսինքն մեր կողմից կատարված հոգեբանական հետազոտությունների արդյունքում բարձր տոկոսային հարաբերությամբ մենք ակնհայտորեն դուրս բերեցինք, այն օրինաչափությունը, որ հետազոտությանը մասնակցած 25–35 տարեկան թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ, ովքեր ազգային ուղղորդման կարգով գտնվում էին տարբեր ՀԿ–ների ապաստարաններում [2; 13] աչքի են ընկնում վիկտիմ վարքի հանդեպ հակվածությամբ, որի արդյունքներն արտացոլված են գծապատկեր 1–ում:



Մենք նկատում ենք, որ բոլոր սանդղակները ստացվել են նորմայից բարձր սահմանում, ինչն արտահայտված է դեղին գույնով: Հատկապես աչքի են ընկնում ինքանակործանիչ, կախյալ և անօգնական, անքննադատ տեսակները: Այս ամբողջ տվյալները միասին ապացուցում են այն փաստը, որ թրաֆիքինգի մեջ ներգրավվելու համար անձը պարտադիր ունենում է վիկտիմ վարքի հանդեպ հակվածություն: Վիկտիմ վարքի հանդեպ հակվածությունն այն նախադրյալն է, որը համապատասխան իրավիճակի դեպքում, անձին դրդում է

դեպի շահագործման: Համալիր մոտեցման սկզբունքներին համապատասխան պետք է փաստել, որ այստեղ օբյեկտին ու սուբյեկտիվը հանդես են գալիս միասնաբար: Դեռահասության ճգնաժամային տարիքի նորագոյացությունների հետ մեկտեղ անբարենպաստ պայմանները վիկտիմ վարքի հանդեպ հակվածությունը հասունության տարիքում վերածվում են թրաֆիքինգի հանդեպ հակվածության, որտեղ գործում է «ագրեսորի հետ նույնականացման մեխանիզմը»: Այս շրջանում հանդիպող ցանկացած խոչընդոտող երևույթ մարդ ներքնայնացնում է և անընդհատ գործընթաց է: Ներքնայնացված որակները, երևույթները իսկույն չի դառնում ինքնաքննադատություն, ուստի ձևավորվող մարդը նույնանալով ագրեսորի հետ, այն շպրտում է արտաքին աշխարհի վրա [17, էջ 85–89], ինչը մենք հանդիպում ենք շահագործողից շահագործվող ձևավորվելու գործընթացում:

Թրաֆիքինգի կանխարգելիչ միջոցառումների մշակման համար անհրաժեշտություն ծագեց մշակել թեսթ–հարցարան «Թրաֆիքինգի հանդեպ հակվածության ախտորոշման» համար: Այսօր այն կիրառվում է իրավապահ մարմինների աշխատանքի ժամանակ, հատկապես վաղ կանխարգելման փուլում:

Այս մեթոդը մեր կողմից մշակվել է թրաֆիքինգի հանդեպ նախնական հակվածությունը ախտորոշելու նպատակով, այն հնարավորություն է տալիս նաև ախտորոշել մարդու կողմից մարդու շահագործման հանդեպ հակվածության մակարդակները (բարձր, միջին, ցածր):

Մեթոդը բաղկացած է 36 դատողություններից, որն էլ իր հերթին ախտորոշում է 7 գործոններ՝

1. Դժվար իրավիճակում հենարան չգտնելու անկարողություն
2. Ագրեսորին արդարացում
3. Մեղքի զգացում, անպետքություն, մենակություն
4. Սոցիալական հարաբերություններում զոհի դերի ընդունում
5. Դեպրեսիվություն, կյանքի իմաստի կորուստ
6. Սոցիալիզացիայի նախնական փուլում հիասթափություն, հատկապես շեշտը դրվում է ընտանիքից դուրս հարաբերությունների վրա
7. Ծնողների հետ վատ հարաբերություններ մանկության շրջանում

Մարդկանց առաջարկվում է ազատ արտահայտել իրենց վերաբերմունքը առաջարկվող արտահայտությունների հանդեպ, որոնք ունեն հուզական տարբեր երանգավորումներ՝ դրանք գնահատելով նախապես առաջարկվող տարբերակներով: Յուրաքանչյուր պատասխանի համար առաջարկվում է 5 տարբերակ՝ համապատասխանաբար 0–ից 5 միավորանոց սանդղակով: Յուրաքանչյուր գործոն ունի իր բանալին, ըստ որի էլ գումարվում են միավորները: (Հարցարանը ներկայացված է վերջում):

Թեսթ–հարցարանով ստացված տվյալները ներկայացված են գծապատկեր 2–ում:



Գծապատկերից երևում է, որ հետազոտվողների մոտ թրաֆիքինգի հանդեպ հակվածությունն ընդհանուր թվով ստացվել է 79 տոկոս: Բավականին մեծ թիվ է հասունության տարիքում գտնվող մարդկանց համար, սակայն տեսնում ենք, որ առավել շեշտված է մեղքի զգացումը, սեփական ես–ի անպետքության, անօգտակարության ապրումները, ուշագրավ է դժվար իրավիճակներում հենարան գտնելու անկարողությունը, ինչն էլ կենցաղային վատ պայմաններում, մի շարք հիասթափություններ ունեցած մարդու համար դառնում է առաջատար վարքային մոդել, ինչն ուղեկցվում է դեպրեսիվության և էքզիստենցիալ մի շարք խնդիրներով: Ագրեսորին արդարացումը թրաֆիքինգի զոհերին դրդում է կրկնազոհականացման, որի արդյունքում հանդիպում ենք «կրկնող թրաֆիքինգ» երևույթին:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 27.08.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Վ. Ավակիմովա, Հ. Էդիլյան, Ե. Շատվորյան**, Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը, հոկտեմբեր 2003–մարտ 2007, Երևան, 2007, 60 էջ
2. Առողջապահության համաշխարհային կազմակերպության էթիկայի և անվտանգության պահանջներից բխող խորհուրդներ թրաֆիկինգի ենթարկված կանանց հետ հարցազրույց վարելու համար, ԱՀԿ (2003)
3. **Ն. Ռ. Հակոբյան**, Էթնոհոգեբանական մի քանի հարցեր կայուն զարգացման հայեցակարգի լույսի ներքո, «Կայուն հասարակական զարգացումը և Հայաստանը», միջազգային կոնֆերանսի նյութեր, Երևան, 1998, էջ 237–238:
4. **Ն. Ռ. Հակոբյան,** Աղանդներ և անձի բարոյահոգեբանական անկումը, «Քրիստոնեական Հայաստանը քաղաքակրթությունների խաչմերուկ», միջազգային գիտաժողով, Երևան, ԵՊՀ, 2001, էջ 47–49:
5. **Ն. Ռ. Հակոբյան,** Անձի ազգային նույնականության հարցի շուրջ, Բանբեր Երևանի Համալսարանի, 2002, հ. 1, էջ 188–193:
6. **Ն. Ռ. Հակոբյան,** Մարգինալ անձի հոգեբանական բնութագիրը, Հոգեբանությունը և կյանքը, 2003, №3, էջ 57–75:
7. **Ն. Ռ. Հակոբյան**, Փոխակերպվող հասարակության մեջ մարգինալության դրսևորման սոցիալ–հոգեբանական առանձնահատկությունները, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2003, էջ 91–98:
8. **Մ. Մեհրաբյան**, Թրաֆիքինգի սոցիալ–հոգեբանական պատճառականության վերլուծությունը, Հոգեբանության և իրավունքի խաչմերուկները, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, 188–198:
9. **Մ. Մեհրաբյան**, Թրաֆիքինգի զոհերի հոգեբանական աջակցությունը և ապագա մանկավարժների կարիերայի զարգացումը, Մանկավարժական կրթության որակի հոգեբանական խնդիրները, Գիտաժողովի նյութեր, 10–12 հուլիսի, Երևան, 2010:
10. **Մ. Մեհրաբյան**, Հոգեբանական դեբրիֆինգը որպես թրաֆիքինգի զոհերի հետ աշխատանքի հոգեվերականգնողական և ուսուցման միջոց, Գիտական հոդվածներ (Հոգեբանություն), Վանաձոր, 2011:
11. **Մ. Մեհրաբյան**, Психолого–педагогические пути борьби с траффикингом, Մանկավարժական կրթություն, Հայացք դեպի ապագա, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2007:
12. **Լ. Մելքոնյան**, «Ինչպես կազմակերպել թրաֆիքինգի դեմ պայքարը համայնքներում», Երևան, ՄՄԿ, 2006:
13. **Ս. Պետրոսյան, Ռ. Մուրադյան, Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան, Կ. Նահապետյան**, Թրաֆիքինգ, Մարդկանց շահագործում, Ձեռնարկ սովորողների համար, Երևան, 2010, 119 էջ:
14. **Долгова А. И., Коробейников Б. В., Кудрявцев В. Н., Панкратов В. В.** Понятия советской криминологии: Методическое пособие. М.: 1985.
15. Насилие, агрессия, жестокость: Криминально–психологическое исследование. М., 1990.
16. Организованная преступность. Круглый стол /Под ред. **Долговой А. И., Дьякова С. В.**, М., 1989. – 16 с.
17. Практическая психология. Методики и тесты /Под ред. **Райгородского Д. Я.**, Самара, 1998.
18. Anti–trafficking and gender programme of the OSCE Mission to Moldova, 2007 report.
19. Anti–Trafficking Training Material for Judges and Prosecutors. Background reader in EU member states and accession and candidate countries, ICMPD (Vienna, 2006).
20. Anti–Trafficking Training for frontline law enforcement officers. Background reader in EU member states and accession and candidate countries, ICMPD (Vienna, 2006).

ПСИХОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ДИАГНОЗА СКЛОННОСТИ К ТРАФИКИНГУ

АКОПЯН НАИРА

Руководитель отдела магистратуры и повышения профессиональной квалификации Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна, доктор психологических наук, професор

МЕГРАБЯН МАРИАМ

Соискатель кафедры развития и прикладной психологии Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна

Трафикинг – это разнородное и многофункциональное насилие, эксплуатация человека человеком, где определяющую роль и значение приобретают личностные и социально–психологические факторы. Трафикинг характеризуется дезорганизующим воздействием на физическое и психологическое здоровье общества, это явление пирамидообразное. Определяющими факторами вовлечения в цепь трафикинговой деятельности являются личностно специфические и социально–психологические своеобразные взаимосвязи, наличествующие в процессе социализации и в структуре личности. В контексте трафикинговой деятельности применяются различные психологические защитные механизмы, среди которых самым типичным является психологическая идентификация, в частности, идентификация с агрессором. Трафикинговая деятельность – целостный образ эксплуатации человека человеком, которой предшествует причинно–следственная связь склонности к виктимному поведению и к трафикингу.

Дата представления статьи: 27.08.2012

PSYCHOLOGICAL ANALYSIS OF DIAGNOZING DISPOSITION TO TRAFFICKING

NAIRA HAKOBYAN

Head of the Department of Master's Degree and Professional Qualification Improvement, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Doctor of Psychological Sciences, Professor

MARIAM MEHRABYAN

Applicant of the Chair of Development and Applied Psychology at ASPU after Khachatur Abovyan

"Trafficking" is a heterogeneous and multifunctional violence, exploitation of a person by another one, where personality and social–psychological factors have decisive importance.

Trafficking is characterized by functions that ruin physical and mental health of society. The picture of this phenomenon is pyramidal. The decisive factors of inclusion into the trafficking activity chain are the specific personality and social–psychological combinations.

Various defense mechanisms are used in the context of trafficking activity, the most significant of them is the psychological identification: "identification with the aggressor". Trafficking activity is the whole picture of exploitation of a person by another one, which is preceded by the cause–effect chain of disposition to victim behavior– disposition to trafficking.

Article submission date: 27.08.2012